487 Ուզում ենք, որ Դու լինես մեր հոգում,

1. Ուզում ենք, որ Դու լինես մեր հոգում,
Քո լույսն ու փառքը տարածենք այս կյանքում,
Հիսուս Արքա՛, իջի՛ր Քո զորությամբ,
Տերերի Տեր, Թագավոր թագավորաց:

Ուրախություն է Քեզ հետ քայլելը,
Երանություն է Քեզ հետ ապրելը,
Հիսուս Արքա՛, պատրաստիր Քո հարսին,
Որ տանես նրան տուն երկնային:

2. Մտնենք Տիրոջ սրահը գոհությամբ,
Պաշտենք հոգով ու ճշմարտությամբ,
Փառաբանենք սրտանց մեր Աստծուն,
Որ թագավորենք միասին երկնքում:

3. Ծուտով կգաս Դու լույս ամպերով,
Հրեշտակների, սուրբերի բանակով,
Կտաս հագուստներ ձյունից էլ ճերմակ,
Որ Քեզ հետ մտնենք երկնային քաղաք: